էր հայերի մէջ ազատութեան յոյսերը հրահրելու համար։

Դրա հետ միասին՝ Եկատերինան նաեւ ծրագրել էր գրաւել Ղրիմի թերակղզին եւ Սեւ Ծովի հիւսիսային ափերը։ Դա՛ եւս Ռուսաստանի համար կենսական նշանակութիւն ունէր — ե՛ւ աշխարհակալական, ե՛ւ առեւտրա-տնտեսական, ե՛ւ Եւրոպային մօտենալու տեսակէտներից։

Ուրիշ խօսքով՝ Ռուսաստանը հարկադրուած էր պատերազմներ մղելու թէ՛ Պարսկաստանի եւ թէ՛ Տաճկաստանի դէմ։ Իսկ մի պատերազմ, որ մղւում էր Հայաստանի թշնամիներից մէկն ու մէկի դէմ, բաւական էր նորից ոգեւորելու հայերին եւ ազատութեան տենչը նրանց մէջ վառելու։

Կուսակցութեան տեսակէտից հարկաւոր էր մէկ կողմից՝ այդ մահմեդական պետութիւնների ուշադրութիւնը պատերազմից հեռացնել եւ ուրիշ կողմ դարձնել. միւս կողմից՝ գրաւել նրանց քրիստոնեայ հպատակների համակրութիւնը եւ եթէ հնարաւոր է՝ մանաւանդ աջակցութիւնը։

Եկատերինան երկու պատերազմ ունեցաւ Տաճկաստանի դէմ, Ղրիմը եւ Սեւ Ծովի հիւսիսային ափերը գրաւելու համար։ Առաջինը՝ 1768–1774, իսկ երկրորդը՝ 1878–1791։

Թէեւ վիճելի հողամասի իսկական տէրը Ղրիմի խանն էր, բայց որովհետեւ նա վասալական կախումն ունէր օսմանեան սուլթանից, ուստի Եկատերինան ստիպուեց զէնքն ուղղել Տաճկաստանի դէմ։

Միեւնոյն ժամանակ նա կարողացաւ վարպետօրէն սքողել իր նպատակները մէկ դեղեցիկ շղարշով։ Օրինակի համար, Տաճկաստանի դէմ մղուող պատերազմների խնդրում նա հրապարակ ձգեց օսմանեան պետութեան քրիստոնեայ հպատակների ազատութեան հարցը։ Դեռ աւելի. հրատարակեց մի կոչ, ուղղուած այդ ազգութիւններին, որպէսզի նրանք օգտուեն առիթից եւ ոտքի կանգնեն։ Ուղարկեց մարդիկ (1769 թ.) Յունաստան, Սերբիա, Սեւ Լեռներ, Վրաստան — ապստամբութիւն քարոզելու եւ տաճիկների դէմ ոտքի հանելու։

Հայերն էլ Արեւելքում աչքի ընկնող ժողովուրդ էին եւ տաճկաց ու պարսից հպատակ։ Հետեւապէս կայսրուհին չէր կարող նրանց աչքաթող անել նման պայմաններում։

Այդ իսկ պատճառով Եկատերինան եւս սկսում է առատ ու թովիչ խոստումներ շռայլել հայ ժողովրդին եւ դրանով բորբոքել մօտալուտ փրկութեան երազները։

Խանդավառութիւնն այնտեղ է հասնում, որ մինչեւ իսկ Սիմէոն Երեւանցու նման հեռատես եւ զգուշաւոր կաթողիկոսը, մօտիկ ապագայի գեղեցիկ հեռանկարով ոգեւորուած, արհամարհում է շահերի ու Երեւանի սարդարների երկիւղը եւ անմիջական բանակցութիւններ սկսում Պետերբուրգի հետ։ Թէեւ դրա իսկական շարժառիթը կրօնական-եկեղեցական էր, սակայն հետագայում, շատ շուտ՝ ով, նաեւ քաղաքական բնոյթ ստացաւ Էջմիածնի եւ ռուսաց կառավարութեան յարաբերութիւնները։

Ինչպէս յայտնի է, Աստրախանի (Հաշտարխան կամ Աժտարխան) հայերը վերջերս թօթափել էին Էջմիածնի իրաւասութիւնը եւ Գանձասարի կաթողիկոսների իշխանութեան ներքոյ մտել։ Սիմէոն Երեւանցին, այդ բանից վշտացած, Դաւիթ վարդապետին պատուիրակութեամբ ուղարկում է Պետերբուրգ մի կոնդակով, որի մէջ կայսրուհուց խնդրում է.—

1. Որ Ռուսաստանում բնակուող բոլոր Լուսաւորչական հայերը, ինչպէս մինչեւ այժմ, այնպէս եւ ապագայում, ենթարկուին Էջմիածնի իրաւասութեանը բոլոր հոգեւոր եւ եկեղեցական-վարչական գործերում։

2. Որ նրանց հովուող եպիսկոպոսը (Առաջնորդ) Էջմիածնից ուղարկուի եւ բոլոր ինքնակոչ հովիւների մուտքը Ռուսաստան՝ արգելուի, եւ

3. Որ Էջմիածնին այս մտքով մի բարձրագոյն հրովարտակ շնորհուի «ի նշան մշտական ողորմածութեան եւ ի յիշատակ բարեբախտ թագաւորութեան»։

Դաւիթ վարդապետի այս պատգամաւորութիւնը շատ լաւ ընդունելութեան արժանացաւ արքունիքում։ Կայսրուհու հրամանով արտաքին գործոց Յանձնաժողովը յօրինեց մի հրովարտակ (30 Յուլիսի 1768 թ.) յանուն հայոց կաթողիկոսի եւ նոյն վարդապետի ձեռքով, մի